ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

16 մայիսի 2018 թվականի N 48-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի 2018 թվականի ապրիլի 17-ի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 33 և 2018 թվականի մարտի 26-ի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 711 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի փետրվարի 28-ի թիվ Ֆ-62/18 գրությունը, «ՎԻՆԵԿԱ» ՍՊ ընկերության 2017 թվականի օգոստոսի 04-ի թիվ 01, 2018 թվականի փետրվարի 19-ի թիվ Վ-012 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.«ՎԻՆԵԿԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2012 թվականի հոկտեմբերի 20-ի օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/111 ընդերքօգտագործման իրավունքում կատարել փոփոխություններ՝

1)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրը ընդլայնել «Արևմտյան 1-ին» տեղամասով,

2)Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի՝ 1.X=4434379 Y=8431321, 2.X=4434470 Y=8431323, 3.X=4434413 Y=8431511, 4.X=4434412 Y=8431708, 5.X=4434369 Y=8431900, 6.X=4434299 Y=8431901, 7.X=4434330 Y=8431708, 8.X=4434353 Y=8431509 (տրված են WGS-84

(ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ 1.X=4434398.0040 Y=8431027.0040, 2.X=4434480.0138 Y=8431315.0385, 3.X=4434377.7076 Y=8431906.8655, 4.X=4434294.0000 Y=8431909.0000, 5.X=4434378.0000 Y=8431315.0000, 6.X=4434408.5014 Y=8431315.0000, 7.X=4434410.3413 Y=8431220.3403, 8.X=4434352.4025 Y=8431088.2533, 9.X=4434340.0068 Y=8431026.9955 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածք, մարվող՝ 1865,0 հազ.մ^3 պաշար և լեռնահատկացման թիվ ԼՎ-111 լեռնահատկացման ակտի՝ 1.X=4434378 Y=8431315 H=835.0 (h=-4.2), 2.X=4434480 Y=8431315 H=839.0 (h=-8.5), 3.X=4434426 Y=8431517 H=838.0 (h=-7.5), 4.X=4434420 Y=8431715 H=838.0 (h=-7.2), 5.X=4434378 Y=8431905 H=838.0 (h=-7.1),6.X=4434294 Y=8431909 H=835.0 (h=-4.4) կոորդինատները փոխարինել՝ 1.X=4434412.6500 Y=8431026.7363 H=839.6 (h=0), 2.X=4434479.7570 Y=8431266.4015 H=839.0 (h=0), 3.X=4434524.4217 Y=8431266.2383 H=839.4 (h=0), 4.X=4434525.2296 Y=8431326.6051 H=839.2 (h=0), 5.X=4434490.5446 Y=8431332.1544 H=839.4 (h=0), 6.X=4434391.5801 Y=8431908.3895 H=838.8 (h=0), 7.X=4434294.0000 Y=8431909.0000 H=838.9 (h=0), 8.X=4434378.0000 Y=8431315.0000 H=839.3 (h=-4.0), 9.X=4434408.4633 Y=8431315.0000 H=839.2 (h=-4.0), 10.X=4434410.3413 Y=8431220.3403 H=839.4 (h=-3.5), 11.X=4434352.4025 Y=8431088.2533 H=839.5 (h=-3.2), 12.X=4434340.0068 Y=8431026.9955 H=839.6 (h=-3.0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 35000 մ^3 պաշար:

3.Կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մարգարայի ավազի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-111 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1)օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում փոփոխություն կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2)ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված տարբերակները,

3)ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի

փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ